

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանի ուղերձը Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակման տոնի առթիվ

Հարգելի հայրենակիցներ

99 տարի առաջ հայ ժողովուրդը, գտնվելով բնաջնջման վտանգի մեջ, քաղաքական ու տնտեսական ծանրագույն պայմաններում, իր մեջ վճռական ուժ գտավ՝ հերոսամարտերի գնով հաղթելու Արեւելյան Հայաստան թափանցած թուրք զավթիչներին եւ հռչակելու Հայաստանի Հանրապետությունը: Դարերի ընթացքում առաջին անգամ Հայաստանը անօրինակ մաքառումների եւ արյան գնով կարողացավ նվաճել իր պետականությունը եւ հրաշքով դնել Հայոց հայրենիքի կերտման հիմքերը:

Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակման տոնի առթիվ ջերմորեն շնորհավորում եմ ձեզ, ցանկանում խաղաղ ժամանակներ, համազգային միասնություն ու բարօրություն:

Ջերմ բարեմաղթանքներով՝

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյան